էտէն գանընըն ճույպարընը՝ պէնի  
ատէմին պիսուշուզ իլէ մէսրուր  
օլմասը իչիւն վէ՛ր :

Խէլառ խաչընը շու տիւնեա  
աէրեասընա տալմըչլարա տօղրու  
ուզատըպ՝ սանա կէթիր :

Լութֆունա միւհթաճըզ՝ սէ՛րփ,  
տէ՛օք , 'ամալտան մէհճուր օլ-  
տուգ , մաղֆիրէ՛թ գըլ . զուլ-  
մէթտէ տօլաչըյօրուղ , իշրա՛գ  
էթ : Իւմիտ սէ՛ն սին . նուր սէ՛ն  
սին . 'էօմր սէն սին . էօլիւմսիւղ-  
լիւք տէ սէ՛ն սին :

Լութֆունա իսթինատ էտէնլէր  
սանա մունթագըր տըրլար . շու  
թէնինէ իլհագ օլանլար՝ խէլառը  
սէնտէն ալմագ իսթէրլէր , գա-  
նընլա սաթուն ալընմըշ օլան շու  
սիւրիւ՝ սէնի զաֆֆար (քաւիչ)  
Քահանայ տէյի թանըր :

Ճիւմէմիղէ տէ նազա՛ր գըլ .  
էմէքլէրինլէ շէքքիմիղի բէվֆ ու  
տէ՛ֆ էթ . րահաթ ուղըղըմըղը սէ-  
լամէթինլէ աինլէնտի՛ր . եա՛րապպ,  
զահմէթլէրիմիղի՝ սէնին կիթմիշ  
օլտուղուն վէ վ՛ատ էթմիշ օլ-  
տուղուն մէսքէնլէրտէ թէսքի՛ն

էյլէ : Օրատա սէնին քիլէրի , Սէնի ,  
Փէտէրի վէ 'Ազիզ Բուհու թէմ-  
ճիա էթմէյէ լաեւդ էյլէ . Ամին :

Ե.

Վարդան Վարդապետին Իսկուղահա  
խիթապէն միւնաճաթը

( Անսկիզբն Ասուած )

Եա' էզէլի Ալլահ , սէ'ն Փէտէ-  
րին գուճաղընտան հիւզուլ էտիւպ'  
սլաքիրէ վէ փաքիզէ Մարիամ-  
տան թէն ալթըն քի , պիզ կիւ-  
նահ իլէ էօլմիւշէրի իհեա էյլէ-  
յէսին , վէ սէնտէն թէպա'ուտ  
էտէնլէրի կէրի տէօնտէրիպ' շաշ-  
կընլարը պուլասըն :

Իմտի շու մուղթարըպ գուլուն'  
հուզուրունա գափանլոյօրում . կէօզ  
եաշըյլէ լէճա ու հիյաղ էտէրիմ ,  
պէնի գօյ վէ'րմէ քի էմրլէրինտէն  
եըրազլաշայըմ . իլլա իւայր 'ամէլ-

լէրէ պիկիւնահ սուրէթտէ թէ-  
գատտաւում էթմէյէ թէշվի'դ էյլէ :

Եա' Բապպ , պրագմա' քի կիւ-  
նահ հէվէսլէրինէ վէ ֆանի էօմ-  
րիւն զէվգլէրինէ միւսլթէլա օլա-  
յըմ . անճագ պէնի գօրգունլա մու-  
հաֆազա էտիւպ , հէփ պէլալար-  
տան վէ տիւնեէվի սէֆալարտան  
մասո'ւն գըլ :

Եա' Բապպըմ , ճանըմըն խէ-  
լաօը իչիւն' մուհապպէթ հաս-  
րէթինի , թէն իչիւն' ըֆֆէթ , վէ  
րուհումումն լէքէլէրինի երյգամագ  
իչիւն կէօզ եաշընը պանա թէզլիյէ  
իհսա'ն էյլէ :

Եա' Բապպ , իւսամիմի մաղլո'ւպ  
էյլէ , վէ պէնի գուվվէթլէնտիր  
քի լէյլ ունիհար մուհարէպէ սիւ-  
րէն նապէտիտ տիւշմէնէ գարշը  
տուրայըմ :

Եա' Բապպ , պանա թէվպէ  
իչիւն միւհլէթ , զահմէթ իչիւն  
խթիրահաթ , վէ 'ատալէթ րուհը  
իհսան էյլէ քի' ֆիքրիմ թէնվիր

օլսուն , վէ լուծֆունա նայիլ  
օլուպ էմրլէրինի հըֆղ էտէյիմ :  
Շու թէնտէ իքէն բուհումու կիւ-  
նահ լէքէլէրինտէն թաթհիր էթ-  
մէք իչիւն պանա մաթէմի ճիւրմ ,  
իրթի'աշը սիյասէթ , վէ էշք ու  
սիրիշք իհաս'ն էյլէ :

Տու'ա վէ տիլէքլէրիմի դապո'ւլ  
էյլէ . րէճա էսիյօրլմ , նիյազ էտի-  
յօրում , եիւզիւնիւ պէնտէն չէ-  
վիրմէ' . նիյազլարլմա գուլա'գ  
վէր . պանա մի'ւթասըն օլան  
միւրիւվլէթի կէօսթէ'ր . շու կիւ-  
նահքեարա րա'հմ էյլէ . զիրա թէվ-  
պէքեարլարըն Ալլահը վէ հօր-  
ղունլարըն իսթիյահաթը սէ'ն սին .  
չէրէֆ , սալթանաթ , 'իզզէթ Սէ-  
նին , ֆէտէրին վէ 'Ազիզ Բուհուն  
ալըր , շիմտի վէ իլէլէպէտ . Ամին :



Ա Ղ Օ Յ Ք

## Մ Ա Ն Ա Ս Է Ի

Մեկիք Մանասենին միւնաճաթը

(Տե՛ր Ամենակալ)

**Ե**ս՝ գաւոր Բապպ, Արրահամըն, Սահակըն, Վէ Յակոբուն Վէ օղարըն սալին զիւրրիւնէթինին Ալլահը. — Ես՝ գաւոր Բապպ, կիւնահրմը 'աճվ եյլէ:

Սէ'ն քի սէմա ու զէմինի Վէ օղարըն պիւթին զիյնէթինի խալէ էյլէտին. — Ես՝ գաւոր Բապպ, . . . :

Սէն քի սէօղլէ էմր էտէրէք տէնիղի պաղլատըն, լիւճճէլէրի դափատըս՝ հէյպէթլի, միւշէրրէֆ Վէ

մուգատուէս իամինլէ թէմհիր էյ-  
լէտին . — Եա՛ գասիր Բապպ, . . . :

Սէնին գուտրէթինին տէհէթի  
եիւղիւնտէն հէր շէյ սարսըր վէ  
թիթրէր . — Եա՛ գասիր Բապպ ,

Մուգատուէս ճէլալընըն 'ազա-  
մէթի պինիհայէ տիր , կիւնահ-  
քեարլար իւզէրինէ հիստէթինին  
թէհախտի շէտիտ տիր , պէշարէ-  
թինին մէրհամէթի տէ հատտսըղ  
վէ հիսապսըղ սըր . — Եա՛ գասիր  
Բապպ , . . . :

Եա՛ Բապպ , սէն միւթէ'ալ ,  
միւլֆիզ , թէհամմիւլիւ , զանի ,  
մէրհամէթլի սին վէ պէնի առտմին  
ֆէնալըզլարը իւզէրինէ աճընըր-  
սըն . — Եա՛ գասիր Բապպ , . . . :

Եա՛ Ալլահ , սէ'ն Սըրահամ , Սա-  
հակ վէ Յակոբ սալիհէր իչիւն  
թէվպէ վազ՝ էթմէտին , օնլար  
սահա կիւնահ էթմէտիլէր . — Եա՛  
գասիր Բապպ , . . . :

Իլլա պէն կիւնահքեար իչիւն  
թէվպէ վազ՝ էթտին , զիրա տէ-

նիզ քէնարընտաքի գումունտան  
զիյատէ կիւնահ իշլէտիմ վէ ֆըս-  
զըմ թէքէսսիւր էյլէտի . — Եւ՛  
գասիր Բապպ , . . . :

Ֆըսզըմըն քէսրէթինտէն սէմա-  
նըն եիւքսէքլիյինէ պազմայա լայ-  
հըզ տէյիլիմ . — Եւ գասիր  
Բապպ , . . . :

Տէմիր պաղլարըն զօրունտան  
պէլիմ պիւքիւլմիւշ տիր վէ պէ-  
նիմ իշիւն հիշ բահաթլըզ եօզ  
տոր . — Եւ՛ գասիր Բապպ , . . . :

Սէնի հիտտէթլէ զաղէպլէնտիր-  
տիմ , հուզուրունտա ֆէնայըզ  
էթտիմ , թասլիր բէքզ էթտիմ  
վէ խըշմընը թէքսիր էյլէտիմ . —  
Եւ՛ գասիր Բապպ , . . . :

Իմտի , եւ՛ Բապպ , գալպտէն  
տիզ չէօքէրէք , լէթաֆէթինտէն  
իսթիրհամ էտէրիմ . — Եւ՛ գասիր  
Բապպ , . . . :

Թէվպէ՛ , եւ՛ Բապպ , թէվպէ՛ ,  
ֆըսզըմը քէնալիմ պիլիլիմ . — Եւ՛  
գասիր Բապպ , . . . :

Սանա բէճա ու նիյազ էտերիմ ,  
պանա 'աֆիլ էյլէ' , եա' Բապալ ,  
'աֆիլ էյլէ վէ պէնի ֆըսզըմա  
կէօրէ հէլաք էյլէ'մէ . — Եա' գա-  
սիր Բապալ , . . . :

Եա' Բապալ , պանա էպէտէն զա-  
զէպլէ'նմէ , շէրրիլէրիմի զիքր  
է'թմէ վէ շէրրիլէ եէրին ալթընա  
էնէնլէր իլէ պէրապէր պէնի տէ  
հիւքմ էյլէ'մէ . — Եա' գասիր  
Բապալ , . . . :

Զիրա սէն , եա' Ալլահ , թէվ-  
պէքիարլարըն Ալլահըսըն . նի'յմէ-  
թինի շու նալանըգ գուլունա  
կէօթէր . — Եա' գասիր Բապալ , . . . :

Ղանի մէրհամէթինէ կէօրէ պէնի  
իհեա էյլէ' տէ , պէն տէ էօմրիւ-  
միւն պիւթիւն կիւնլէրինտէ սանա  
համտ ու սէնա էտէյլիմ . — Եա'  
գասիր Բապալ , . . . :

Եա' Բապալ , սէմանըն պիւթիւն  
մէլէքլէրի սանա համտ ու սէնա  
էտէրլէր . վէ շէրէֆ իլէլէպէտ սէ-  
նին տիր . Ամին :

Փառք Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ  
Այծմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից  
Ամէն :

Եա՛ Բապոյ , սանա՛ րէճա՛ ու  
նրկազ էտէրիմ , կիւնահրմը պանա՛  
'աֆիլ էյլէ :

Եա՛ զանի մէրհամէթլի Բապա ,  
պանա՛ րա՛հմ էյլէ :

Եա՛ Ալլահ շու՛ կիւնահքեարը  
կիւնահտան փաքլէ՛ վէ իհեա՛  
էյլէ :

Եա՛ խալիզիմ վէ իւմիւտիմ Ալ-  
լահ , շու՛ կիւնահքեար գուլունա  
շէֆզա՛թ էյլէ վէ շու՛ չօգ կիւնահ-  
քեարա րա՛հմ էյլէ :

Եա՛ միւպարէք , 'ազիզէ՛ վէ  
տա՛իմ պաքիրէ Մարիամ Ս.սոռա-  
ծածին , շու՛ կիւնահքեար իչիւն  
Բապոյա շէֆա՛աթ էյլէ :

Եա՛ Ալլահըն ճիւմէ՛ 'ազիզէրի,  
շու՛ կիւնահքեար իչիւն սէմատա  
փէտէրլն 'ինտինտէ շէֆա՛աթ էտի-  
նիզ :

Եւ՝ զարեգէսից Ալլահըն օղլու  
Քրիստոս , բէճալարըմըզը գապսւլ  
էյլէ , զիրա ճանըմըզ ասնա իլ-  
թիճա էթմիշ տիր :

Եւ՝ Բապպ , մուգաստէս վէ  
զիզըյմէթ խաչընըն զալիպ գուվ-  
վէթիյլէ , պիզի մուհաֆազա՝ էյլէ :

Եւ՝ Բապպ , սէլամէթ մէլէյինի  
իրսալ է՛թ քի կէլիպ լէյլ ու նիհար  
պիզի ֆիւթուրսուզ մուհաֆազա  
էյլէսին :

Եւ՝ Բապպ , պիզի միւրիւվ-  
վէթինլէտէ թէզէքքիւր էյլէ , մէ-  
լէքիւթիւնլէ կէլտիյինտէ պիզի թէ-  
զէքքիւր էտիւպ , պիզէ բա՛հմ էյլէ :

### Սաղմոս Ծ.

( Ողորմեա՛ ինձ Աստուած )

Եւ՝ Ալլահ , 'ազիմ 'ինայէթինէ  
կէօրէ պանա մէրհամէ՛թ էյլէ , քէս-  
րէթ ի չէֆազաթընա կէօրէ ֆըս-  
զըմը մա՛հվ էյլէ :

Պէնի ճիւղմիւմտէն պիւսպիւ-  
թիւն երջգայրպ, կիւնահարմ-  
տան պէնի թաթհի'ր էյլէ :

Պէն քէնտի ֆըսզըմը պիւիւրիմ'  
վէ կիւնահըմ տա'րիմ կէօղիւմիւն  
էօնիւնտէ տիր :

Եա' րապպ եալընըզ սանա  
գարչը կիւնահ էյլէտիմ վէ հու-  
ղուրունտա քէօթիւլիւք իշլէտիմ  
թա' քի քէլամընտա 'ատիլ վէ  
հիւքմ էթտիյինտէ' զալիպ օլառնո  
վալիտէմ պէնի շէրր իլէ հա-  
միլէ օլտու վէ կիւնահ իշլինտէ  
տիւեայէ կէթիւրտի :

Եա' րապպ, սէ'ն հագիգաթը  
սէվտին, նամ'ալիւմ վէ կիզլի  
շէյլէրի 'իւմինլէ պանա պիւտիւրտին:  
Պէնի զուֆա իլէ փաքլէ' թա-  
հիր օլայըմ. պէնի երջգա' վէ  
գարտան պէյաղ օլաճաղըմ :

Եա' րապպ, պանա մէսէրրէթ  
վէ շաղլըզ իշիթտի'ր քի' մուզ-  
թարըպ քէմիքլէրիմ սէվինսինլէր,  
Եիւզիւնիւ կիւնահարմտան

չէվիրիւպ , ճիւմլէ քէօթիւլիւքլէ-  
րիմի պէնտէն մա'նվ էյլէ :

Եա' Ալլահ , պէնտէ պիր փաք  
զալպ սապիթ էյլէ . տէրունիւմտէ  
սօզրու պիր բուն թագէլէ :

Եա' Բապպ , պէնի հուզուրուն-  
տան թարտ էթմէ վէ 'Ազիզ Բու-  
հունու պէնտէն չըգա'րմա :

Եա' Բապպ , խէլասընըն մէսէր-  
բէթինի պանա վէ'ր , վէ բուն ը  
քէրիմինլէ պէնի սապիթ զըլ :

Ֆասըզլարա թարիզլէրինի թ'ա-  
լիւմ էտէլիւմ վէ կիւնահ,քիարլար  
բիւճու' էթսինլէր :

Եա' Ալլահ , եա' խէլասըմըն  
Ալլահը , պէնի գանտան խէլա'ս  
էյլէ , վէ լիսանըմ 'ատալէթինիւտէ  
թէրէննիւմ էտէճէք տիր :

Եա' Բապպ տուտազլարըմը աչար  
իսէն , տիհանըմ թէսպիհաթընը  
թէրէննիւմ էտէճէք տիր :

Էկէր իսթէսէիտին գուրպան  
թագաիւմ էտէր իտիք , լաքին սէն  
մուհրազայա պիլէ բազի օլմատըն :

Ալլահն գուրպանը մահճուպ  
պիր բուհ տըր . փաք , մահճուպ ,  
բուհու Ալլահ թահգիր էթմէզ :

Եա' Բապպ , հիւանի բիղանլէ  
Սիօնա էյիլիք է'թ վէ Երուսաղէ-  
մին սուրլարը պինա օլաճաղլար :

Մէզպանընա 'ահտ գուրպան-  
լարը իչիւն թօսուըլար չըգար-  
տըզլարը զէման' սալահ գուր-  
պանլարընա բաղի օլաճագսըն :

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ .  
Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից  
Ամէն :

### Սաղմոս ՃԱ.

( Տէր , լո՛ւր աղօթից իմոց )

Եա' Բապպ , տու'ամը իսթիմա'  
էյլէ' , ֆէրեատըմ սանա կէլսին վէ  
տիտարընը պէնտէն չէվլի'րմէ :

Մուղա"իղամ կիւնիւնտէ գուլա-  
ղընը պանա մէյլ էթտիրիւպ ֆէր-

եատրմ կիւնիւնտէ պէնի սիւր-  
'աթլէ տինլէ' :

Կիւնլէրիմ տիւման կիպի մանվ  
օլտու քէմիքլէրիմ չալը չըրփը  
կիպի գուրուտու :

Դալպիմ օթ կիպի վուրուլուպ  
դուրուտու , էքմէյիմի եէմէյի տէ  
ունուլթատում :

Ահ ու զարմտան քէմիքլէրիմ  
էթիմէ եափըչտը վէ պէն պէրրիյ-  
էնին սադա գուշունա պէնդէ-  
տիմ :

Խարապալարտաքի պայգուշ կի-  
պի օլտում , ույգուսուղ գալտըմ,  
տամ իւղէրինտէ եալընըղ գալան  
սէրչէ կիպի օլտում :

Տիւշմէնլէրիմ պէնի հէր կիւն  
թահգիր էթտիլէր վէ պէնի մէտհ  
էտէնլէր պանա գարչը եէմին էթ-  
տիլէր :

Բիւլիւ էքմէք կիպի եէտիմ վէ  
իչկիմէ կէօղ եաչը գարըչտըրտըմ :

Խըչմ ու զադապըն սէպէպին-  
տէն (պէօյլէ օլտու) , դիրա պէնի

եօզարը գալտըրըպ եէրէ պըրագ-  
տըն :

Կիւնդէրիմ կէօլկէ կիպի կէչտի,  
պէն իսէ օթ կիպի գուրսուտում :  
Եա՛ Բապպ , սէն իլէլէպէտ պա-  
գի սին վէ սէնին զիքրին սիլսի-  
լէտէն սիլսիլէյէ տիր :

Սէն գըյամ էտիւպ՝ Սիօնա մէր-  
համէթ էտէճէքսին . օնա մէրհա-  
մէթ էտէճէք վազըթ կէլմիշ տիր :

### Աղօթք

(Տէր Աստուած փրկուքեան մերոյ)

Եա՛ խէլասըմըզըն Բապպ Ալ-  
լահը , սէն յահիմ վէ չէֆիգ  
սին , զանի մէրհամէթլի վէ սա-  
պիր սին . սէն պէնի ատէմին քէօ-  
թիլլիլքլէրէնէ աճընըրսըն , կիւ-  
նահքեարըն էօլիլմիւնիլ տէյիլ՝  
իլլա օնուռն քէօթիլ եօլտան տէօ-

նիւպ ինեա օլմասընը իսթէրսին :  
 Եա՛ Բապայալ , սէն զանի մէհրա-  
 մէթինլէ շու գուլարընը թէսէլլի  
 էթ վէ թէվպէյէ ֆուրսաթ վէր :  
 Միւրիւվէթինլէ սուլս ու սալահ  
 կէօսթէր , վէ պիղի մուգաստէս  
 քիլիսանա 'ազա էյլէ' . շէօյլէ քի  
 'իթիրաֆ ու թէվպէ սայէսինտէ  
 բունճա շիֆափէզլիր օլուպ մու-  
 գաստէս քիլիսանա կիրէլիմ վէ  
 ճէմա'աթընլա պէրապէր սանա  
 (ե'անի)փէտէրէ , էվլատա վէ 'Ազիզ  
 Բունա համտ ու սէնա էտէլիմ  
 չիմտի վէ իլէլ էպէտ . Ամին :



# Ք Ն Ա Գ Ի Ր Ք

---

ԹԷՐՃԷՄԷ ՕԼՈՒՆՄՈՒՇ ՓԱՐԶԱԼԱՐՏԱՆ

ՊՐԱԶԸԼԱՐԸՆԸՆ ԱՍԸԼԼԱՐԸ

---

Իշպու Ասրվարա Ս. Ներսէս Շնորհալի  
Կաթողիկոսուն ասարը պերկիւզիտէլերին-  
տէն իւշ փարբա թերճեմէ օլմասըզ իլամէ  
հոիւմիշ տիր :

## ՀԱՆԳԱՆԱԿ ՀԱՒԱՏՈՅ

**Հ**ԱՒԱՏԱՄՔ ի մի Աստուած

Հայրն ամենակալ, արարիչն երկնի  
եւ երկրի, երեւելեաց եւ անե-  
րեւութից. եւ ի մի Տէր Յիսուս  
Քրիստոս, յՈրդին Աստուծոյ, ծըն-  
եալն յԱստուծոյ Հօրէ՝ Միածին,  
այսինքն՝ յէութենէ Հօր, Աս-  
տուած յԱստուծոյ, Հոյս ի Լուսոյ,  
Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ  
ճշմարտէ, ծնունդ եւ ոչ արարած.  
նոյն ինքն ի բնութենէ Հօր, որով  
ամենայն ինչ եղեւ յերկիրս եւ ի  
վերայ երկրի, երեւելիք եւ անե-  
րեւոյթք. որ յաղաղս մեր մարդ-  
կան եւ վասն մերոյ փրկութեան,  
իջեալ ի երկնից մարմնացաւ, մար-  
դացաւ, ծնաւ կառարեւապէս ի  
Մարիամայ Սրբոյ Կուսէն Հոգւովն

Սրբով, որով էառ մարմինն (և) հոգի եւ միտս եւ զամենայն՝ որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս եւ ոչ կարծեօք. չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, (և) ելեալ յերկիրնս հովին մարմնովն նստաւ ընդ աջմէ Հօր. զաւուր է հովին մարմնովն եւ փառօք Հօր ի դատել զկենդանիս եւ զմեռեալս. որոյ թաղաւորութեան ոչ գոյ վախճան :

Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին յանեղն եւ ի կատարեալն, որ խօսեցաւ յՕրէնս եւ ի Մարգարէս եւ յԱւետարանս, որ էջն ի Յորդանան քարոզեաց յԱռաքեալսն եւ ընդհեցաւ ի Սուրբսն :

Հաւատամք եւ ի մի միայն, ընդհանրական եւ առաքելական եկեղեցի. ի մի մկրտութիւն, յառաջխարութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց, ի յարութիւն մեռելոց, ի դատաստանան յաւիտենից հոգւոց եւ մարմնոց, յար-

քայութիւնն երկնից եւ ի կեանսն  
յաւիտեանս :

Իսկ որք ասին , էր երբեմն՝ յոր-  
ժամ ո՛չ էր Որդին , կամ էր եր-  
բեմն՝ յորժամ ո՛չ էր Սուրբ Հոգին ,  
կամ թէ յոչէից եղեն , կամ յայմէ  
էութենէ ասեն լինել զՈրդին Աս-  
տուծոյ եւ կամ զՍուրբ Հոգին , եւ  
թէ փոփոխելի են կամ այլայլելի ,  
զայնպիսին նշովէ Կաթողիկէ եւ  
Առաքելական Եկեղեցի :

( Ի Սրբոյ Լուսաւորչէն մերմէ ասացեալ )

Իսկ մեք փառաւորեսցուք որ  
յառաջ քան զյաւիտեանս , եր-  
կիրպապանելով Սրբոյ Երրորդու-  
թեանն եւ միոյ Աստուածութեանն՝  
Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ ,  
այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յա-  
ւիտենից :

## ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

(Զկնի «Տէր յերկնից»ին)

Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ,  
 եւ յերկիր խաղաղութիւն, ի մար-  
 ղիկ հաճութիւն :

Եւ օրհնութիւն քեզ ի բար-  
 ձո՛ւնս . օրհնեա՛լ ես, Տէ՛ր Աս-  
 տուած մեր . օրհնեմք զՔեզ եւ  
 գովեմք զՔեզ : Խոստովանիմք Տէր  
 զՔեզ եւ երկիր պագանեմք Քեզ .  
 փառաւորեմք զՔեզ, գոհանամք,  
 Տէ՛ր, զքէն վասն մեծի փառաց  
 քոց, Տէ՛ր թագաւոր Սուրբ երկ-  
 նային, Աստուած եւ Հայր ամե-  
 նակալ :

Տէ՛ր՝ եւ Որդի Հօր միածին, Յի-  
 սուս Քրիստոս եւ Սուրբ Որդի :  
 Տէ՛ր Աստուած, Գա՛ռն Աստուծոյ  
 եւ Որդի Հօր, որ առեր զմերս  
 ի կուսէն : Ողորմեցար, բարձեր  
 զմեզս աշխարհի . եւ արգ՛ ընկա՛լ

զաղաչանս մեր : Սուրբ , որ  
նստիս ընդ աջմէ Հօր , ողորմեա'յ  
մեզ : Զի դու միայն սուրբ՝ դու  
միայն . բարձրեալ ես դու միայն՝  
Տէ՛ր մեր Յիսուս Բրիստոս :

Տէ՛ր՝ եւ Հոգիդ Սուրբ , որ ի  
փառս Աստուած ընդ Հօր . Ամէն :

( Հանգիս )

Եւ յամենայն ժամ օրհնեմք  
զքեզ Տէ՛ր , եւ գովեմք զանուն  
սուրբ քո՝ յաւիտեան եւ յաւիտեանս  
յաւիտենից : Արժանի արա՛, Տէ՛ր ,  
զօրս զայս խաղաղութեամբ , եւ  
առանց մեղաց պահեա՛ զմեզ :  
Օրհնեա՛լ ես , Տէ՛ր Աստուած հարցն  
մերոց , գովեալ եւ փառաւորեա՛լ  
է անուն սուրբ քո՝ յաւիտեանս :

Օրհնեա՛լ Տէ՛ր , ուսո՛ ինձ զար-  
դարութիւն քո .

Օրհնեա՛լ Տէ՛ր , ուսո՛ ինձ զար-  
դարութիւն քո .

Օրհնեա՛լ Տէ՛ր , ուսո՛ ինձ զար-  
դարութիւն քո :

Տէ՛ր , ապաւէն եղեր մեր յազգէ  
յազգ : Եւ աղաչեմ , Տէ՛ր , ողոր-  
մեա՛ ինձ եւ բժշկեա՛ զանձն իմ ,  
ես մեղայ քեզ :

Յո՛յց մեզ, Տէ՛ր, զողորմութիւնս  
քո, եւ զփրկութիւնս քո տուր մեզ :

Տէ՛ր , ողորմութիւն քո յաւի-  
տեան , զգործս ձեռաց քոց մի՛  
անտես առներ :

Տէ՛ր իմ , զքեզ ապաւէն ինձ  
արարի , ուսո՛ ինձ առնել զկամս  
քո , զի դո՛ւ ես Աստուած իմ :

Ի քէն է , Տէ՛ր , ազբի՛ր կեն-  
դանութեան , եւ լուսով երեսաց  
քոց տեսանեմք զլոյս :

Ծագեա՛ զողորմութիւնս քո ,  
որք ճանաչեն զքեզ , Տէ՛ր :

### Մ ա ղ թ ա ն ք

Փա՛ռք , պատի՛ւ եւ երկրպա-  
ղութիւն ի բարձունս, Հօր եւ Որդ-  
ւոյ եւ Հոգւոյն Սրբոյ . այժմ՝ եւ  
միշտ եւ յաւիտեանս յաւիտենից .  
Ամէն :

Ա Ղ Օ Թ Բ

Մ Ա Ն Ա Ս Է Ի

**Տ**է՛ր ամենակալ, Աստուած  
Արբանամու, Սահակայ, Յակոբայ  
եւ զաւակի նոցա արդարոց: Ամե-  
նակալ Տէր, թո՛ղ զմեղս իմ:

Որ արարեր զերկինս եւ զերկիր  
եւ զամենայն զարդ նոցա: Ամե-  
նակալ Տէ՛ր . . . :

(Որ) կապեցեր զծով բանիւ հը-  
րամանաւ քով, փակեցեր զխորս,  
կնքեցեր ահաւոր եւ փառաւոր-  
եալ անուամբ քով: Ամենակալ  
Տէ՛ր . . . :

Որ ամենայն ինչ սարսեալ եւ  
զոդայ յերեսաց ահի զօրութեան  
քո: Ամենակալ Տէ՛ր . . . :

Անրա՛ւ է մեծվայելչութիւն  
փառաց որբութեան քոյ . սաստի՛կ  
է բարկութիւն սպառնալեաց քոց  
ի վերայ մեղաւորաց , անչափ եւ  
անքնին են ողորմութիւնք աւետ-  
եաց քոց : Ամենակալ Տէ՛ր . . . :

Դու , Տէ՛ր , բարձրեալ երկայ-  
նամիտ բազումողորմ , եւ զըջա-  
նաս ի վերայ չարեաց մարդկան :  
Ամենակալ Տէ՛ր . . . :

Դու , Աստուած , ոչ եղիր ա-  
պաշխարութիւն վասն արդարոցն ,  
Աբրահամու , Սահակայ , Յակո-  
բայ , որք ոչն մեղան քեզ : Ամե-  
նակալ Տէ՛ր . . . :

Այդ եղիր ապաշխարութիւն  
վասն իմ մեղաւորիս , զի մեղայ  
աւելի քան զաւազ (առ եղր) ծո-  
վու , եւ բազմադան անօրէնու-  
թիւնք իմ : Ամենակալ Տէ՛ր . . . :

Չեմ արժանի հայել եւ տեսա-  
նել զբարձրութիւնս երկնից՝ ի  
բազմութենէ անօրէնութեան իմոյ ,  
Ամենակալ Տէ՛ր . . . :

Կորացեալ եմ ես ի բռնութենէ  
կապանաց երկաթեաց, եւ ոչ դոյ  
ինձ հանգիստ: Ամենակալ Տէ՛ր...:

Բարկացուցի սրտմտութեամբ,  
եւ չար առաջի քո արարի, կանգ-  
նեցի պատկեր եւ բազմացուցի  
զցասումն: Ամենակալ Տէ՛ր...:

Եւ արդ՝ խոնարհեցուցանեմ  
զծունր սրաի իմոյ, եւ խնդրեմ  
ի քաղցրութենէ քումմէ: Ամենա-  
կալ Տէ՛ր...:

Մեղայ, Տէ՛ր, մեղայ, եւ զա-  
նօրէնութիւնս իմ ես ինձէն գի-  
տեմ: Ամենակալ Տէ՛ր...:

Աղաչեմ եւ խնդրեմ ի քէն,  
թո՛ղ ինձ, Տէ՛ր, թո՛ղ ինձ, եւ  
մի՛ կորուսաներ զիս ըստ անօրէ-  
նութեան իմոյ: Ամենակալ Տէ՛ր...:

Մի՛ յաւիտեան բարկանար ինձ,  
եւ մի՛ յիշեր զչարիս իմ, եւ մի՛  
պարտաւորեր զիս ընդ այնոսիկ,  
որ իջանեն ի ներքոյ երկրի չար-  
եօք: Ամենակալ Տէ՛ր...:

Կեցուցես զիս ըստ բազում

ողորմութեան քում, եւ օրհնեցից  
զքեզ զամենայն աւուրս կենաց  
իմոց: Ամենակալ Տէ՛ր . . . :

Զքեզ, Տէ՛ր, օրհնեն ամենայն  
զուարթունք երկնից, եւ քո՛ են  
փառք յաւիտեանս. Ամէն:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգ-  
ւոյն Սրբոյ: Այժմ եւ միշտ եւ յա-  
ւիտեանս յաւիտենից. Ամէն:

Աղաչեմ եւ խնդրեմ ի քէն,  
Տէ՛ր, թո՛ղ ինձ զմեղս իմ:

Բազումաղորմ Տէ՛ր, ողորմեա՛  
ինձ:

Աստուած, քաւեա՛ զիս զմե-  
ղաւորս ի մեղաց եւ կեղո՛:

Արարի՛չ իմ եւ յո՛յս Աստուած,  
զթա՛ յիս՝ ի մեղուցեալ ծառայո՛  
եւ ողորմեա՛ ինձ բազմամեղիս:

Ամենօրհնեալ Սրբուհի եւ միշտ  
կոյս Աստուածածին Մարիամ, բա-  
րեխօսեա՛ առ Տէ՛ր վառն իմ մե-  
ղաւորիս:

Ամենայն սուրբք Աստուծոյ ,  
բարեխօսեցէ՛ք առ Հայր յերկինս  
վասն մեր մեղաւորացոյ :

Քրիստո՛ս , Որդի Աստուծոյ ա-  
նոխակալ , ընկա՛լ զաղաչանս մեր,  
զի ի քեզ են ապաւինեալ անձինք  
մեր :

Յազթող զօրութեամբ՝ սուրբ  
պատուական խաչիւ քո , Տէ՛ր ,  
պահպանեա՛ զմեզ :

Առաքեա՛ , Տէ՛ր , զհրեշտակ խա-  
ղաղութեան քո , որ եկեալ սլա-  
հեցէ զմեզ անխռովս ի ատէ եւ  
ի գիշերի :

Եւ մարդասիրութեամբ քով յիշ-  
եա՛ զմեզ , Տէ՛ր , յիշեա՛ զմեզ  
յորժամ գառ արքայութեամբ քով  
եւ ողորմեա՛ մեզ :

---

## Մաղմուս Ծ.

Ողորմեա՛ ինձ, Աստուած, ըստ  
մեծի ողորմութեան քում, ըստ  
բազում գթութեան քում քաւեա՛  
զանօրէնութիւնս իմ:

Առաւել լուա՛ զիս յանօրէնու-  
թենէ իմէ, եւ ի մեղաց իմաց  
սո՛ւրբ արա զիս:

Զանօրէնութիւնս իմ ես ինձէն  
զիտեմ, եւ մեղք իմ առաջի են  
յամենայն ժամ:

Քեզ միայն մեղայ, Տէ՛ր, եւ  
չար առաջի քո արարի:

Որպէս արդար եղիցիս ի բանս  
քո եւ յազթող ի դատել քեզ:

Անօրէնութեամբ յղացաւ, եւ ի  
մեղս ծնաւ զիս մայր իմ:

Դու, Տէ՛ր, զճշմարտութիւն  
սիրեցեր, զանյայտս եւ ըզծած-  
կեալս իմաստութեամբ քով յայտ-  
նեցեր ինձ:

Յօղեա՛ յիս մշտեալ եւ սուրբ

եղեց , լուա՛ եւ քան զձիւն ըսպի-  
տակ եղեց :

Լսելի՛ արա ինձ զցնծութիւն եւ  
զուրախութիւն եւ ցնծասցեն ոս-  
կերք իմ տառապեալք :

Դարձո՛ զերեսս քո ի մեղաց ի-  
մոց , զամենայն անօրէնութիւնս իմ  
քաւեա՛ յինէն :

Սիրտ սուրբ հաստատեա՛ յիս  
Աստուած , եւ հոգի ուղիղ նորո-  
գեա՛ ի փորի իմում :

Մի՛ ընկենուր զիս , Տէ՛ր , յե-  
րեսաց քոյ , եւ զհոգի քո սուրբ  
մի՛ հաներ յինէն :

Տո՛ւր ինձ ցնծութիւն փրկու-  
թեան , եւ հոգւով պետութեան  
քոյ հաստատեա՛ զիս :

Ուսուցից անօրինաց ըզճանա-  
պարհս քո , եւ ամպարիշտք առ  
քեզ դարձցին :

Փրկեա՛ զիս յարենէ , Աստուած ,  
Աստուած փրկութեան իմոյ . ցըն-  
ծասցէ՛ լեզու իմ յարդարութեան  
քում :

Տէ՛ր , եթէ զշրթունս իմ բա-  
նաս , բերան իմ երգեսցէ զօրհնու-  
թիւնս քո :

Թէ կամեցեալ էիր պատարագս  
մատուցանէաք , բայց զու ընդ  
ողջակէզս իսկ ոչ հաճեցար :

Պատարագ Աստուծոյ՝ հոգի խո-  
նարհ , զսիրտ սուրբ եւ զհոգի  
խոնարհ՝ Աստուած ո՛չ արհամարհէ :

Բարի՛ արա , Տէ՛ր , կամօք քովք  
Սիոնի , եւ շինեսցին պարիսպք  
Երուսաղէմի :

Յայնժամ հաճեսցիս ընդ պա-  
տարագս արդարութեան , ուխտից  
պատարագս հանցեն ի ոնդան քո  
զուարակս :



ՄԱՂԹԱՆՔ ԶՕՐԱԻՈՐՔ

ԱՐՀԱՒՐԱՅ ԳԻՇԵՐԱՅՆՈՑ

Ի խորոց արհից խօսք ընդ Աստուծոյ

Բան ԺԲ.

Գ. **ԸՆԿԱՆՆ** քաղցրութեամբ ,  
Տէ՛ր Աստուած հօգօր , զգառնացո-  
ղիս զաղաչանս . մատի՛ր զթու-  
թեամբ՝ առ պատկառեալս զիմօք .  
փարատեա՛, Ամենապարզեւ , զա-  
մօթական տխրութիւնս . բարձ-  
րինէն , Ողորմած , զանբերելի  
ծանրութիւնս . անջրպետեա՛, Հը-  
նարաւոր , զմահացու կրթութիւնս .  
աւարեա՛, Միշտ Յաղթող , ըզխա-  
րողին հաճութիւնս . բացադրեա՛,

Վերնային, զմոլելոյն մառախուղ .  
կնքեա՛, Կեցուցիչ, զկորուսչին  
ընթացմունս . ցրուեա՛, Ծածկա-  
տես, զըմբռնողին չար պտմունս .  
խորտակեա՛, Սնքնին, ըզմարտո-  
ղին դիմեցմունս :

Տեսառնադրեա՛ Քո անուամբդ՝  
զլոյսանցոյց երդ յարկիս . պար-  
փակեա՛ Քո ձեռամբ՝ զառաստաղ  
տաճարիս . գծադրեա՛ Քո անը-  
ւամբդ՝ զմուտ սեմոց սենեկիս .  
կերպացո՛ղ Քո նշանդ՝ ի յետս ե-  
լից մաղթողիս . ամրացո՛ր Քո ա-  
ջուլդ՝ զհանգստեան խշտի . մաք-  
րեցե՛ս ի հաղթից՝ զծածկարան  
անկողնոյս . պահեսցե՛ս Քո կա-  
մօքդ՝ զտառապեալ անձն ոգւոյս .  
անխարդախ արասցես զՔո չնորհ-  
եալ շունչ մարմնոյս . կացուսցե՛ս  
շրջափակ՝ զպար զօրուդ երկնայ-  
նոյ . կարգեսցես ի դիմի՝ ընդդէմ  
դիւացն պառու :

Տո՛ւր հանգիստ բերկրութեան  
մահահանգոյնս նիրհման ի խորու .

թեան զիշերիս , բարեխօսութեամբ  
հայցուածոց Սրբոյ Աստուածած-  
նիդ , եւ ամենայն ընտրելոց :

Ամփոփեալ պարուրեա՛ ըզպա-  
տուհան տեսութեանց՝ զգայարա-  
նաց իմաստից՝ անզարհուրելի զե-  
տեղմամբ ի ծփական խռովու-  
թեանց , կենցաղական զբաղմանց ,  
անրջական երազոց , խօշականաց  
ցնորից , յիշատակաւ Քո յուսոյդ՝  
անմխասելի պաշտպանեալ :

Եւ սթափեալ վերստին ի նընջ-  
մանէ ծանրութեան՝ ամենազգաստ  
արթնութեամբ , հոգենորոգ զու-  
արթութեամբ ի քեզ արձանաց-  
եալ , զայս ձայն մաղթանաց՝ բուր-  
մամբ հաւատոց , Քեզ՝ Ամենօրհ-  
նեալ Թագաւոր փառաց անձա-  
ռից , փառաբանողաց երկնագու-  
մար խմբից երգակցեալ՝ յերկիրս  
առաքել :

Զի դո՛ւ փառաւորեալ ես յա-  
մենայն արարածոց յաւիտեանս  
յաւիտենից . Ամէն :

## ԱՂՕԹԻՔ ԶՕՐԱՒՈՐԻՔ

Ի խորոց արհից խօսք ընդ Աստուծոյ

Բան ԽԱ.

Ա. Որքի՛ք՝ Աստուծոյ կենդանւոյ  
օրհնեալ յամենայնի, Հօրդ ահա-  
ւորի անքնին ծնունդ, որ տրկա-  
րանայ առ ի քէն եւ ոչինչ: Որ ի  
ծագել անստուեր նշուից ողոր-  
մութեան քո փառաց՝ հալին մեղք,  
հալածին դեւք, ջնջին յանցանք,  
խղին կապանք, խորտակին շրջ-  
թայք, կենդանածնին մահաց-  
եալք, բռնկին հարուածք, ողջանան  
վէրք, բառնին ապականութիւնք,  
տեղի տան տխրութիւնք, նահան-  
ջին հեծութիւնք, փախնու խա-

ւարն , մեկնի մէզն , մերժի մա-  
ռախուղն , փարափ մուայլն ,  
սպառի աղջամուղջն , վերանայ  
մութն , գնայ գիշերն , տարադրի  
տաղնապն , չքանան չարիքն , հա-  
լածին յուսահատութիւնքն , եւ  
թագաւորէ ձեռն քո ամենակար՝  
Քաւի՛չդ ամենայնի :

Բ. Որ ո՛չ եկիր կորուսանել  
զմարդկան ոգիս , այլ՝ կեցուցա-  
նել , թո՛ղ ինձ զանթիւ չարիոն  
իմ բազում ողորմութեամբդ . զի  
դո՛ւ միայն ես յերկնի անճառ եւ  
յերկրի անղնին , ի տարր գոյի եւ  
յեզրս ծաղայ աշխարհի . սկիզբն  
ամենայնի եւ յամենայնի , ամե-  
նայն լրամաք օրհնեալ ի բարձունս .  
եւ Քեզ ընդ Հօր եւ Հոգւոյդ  
Սրբոյ փառք յաւիտեանս . Ամէն :

Ի խորոց ւրից խօսք ընդ Աստուծոյ

Բան ԶԹ.

Ա. Աստուած եւ Տէր, կեանք եւ արարիչ, ողորմած, գթած, լոյս, երկայնամիտ, անոխակալ, մարդասէր, ամենագութ, պարգեւատու, փրկիչ, օրհնեալ, գովեալ, բարեբանեալ :

Դարան ամբութեան, պատըսպարան վստահութեան, առանց նենգութեան բարի, առանց խաւարի ճառագայթ, քաւիչ մեղաց, ողջացուցիչ վիրաց, անհասանելեաց հնարք, անմատչելեաց հպաւոր, անյուսութեան ելք :

Անուն քո խոստովանեալ՝ Աստուծոյ Որդի : Եւ Հօր քո ընդ Քիզ հղօրի եւ ահաւորի եւ Հոգւոյդ ամենակալի եւ ընդ քեզ երկրպագելոյ փառք եւ պաշտօն դահաբանութեան յաւիտեանս . Ամէն :

## Ա Ղ Օ Թ Ք

## Ի Ի Ր Ա Ք Ա Ն Չ Ի Ի Ր Ա Ն Չ Ա Ն Ց

ՀԱԻԱՏԱՑԵԼՈՑ Ի ՔԻՒՍՏՈՍ

Զոր արարեալ է Սրբոյ Տեառն Ներսիսի  
Հայոց Կաթողիկոսի

**Հ**ԱԻԱՏՈՎ, խոստովանիմ ե  
երկիրպագանեմ քեզ Հա՛յր եւ  
Որդի եւ Սուրբ Հոգի, անեզ եւ  
անմահ բնութիւն, արարիչ Հրեշ-  
տակաց եւ մարդկան եւ ամենայն  
եղեւոյց. ողորմեա՛ քո արարածոց,  
եւ ինձ բազմամեղիս :

Հաւատով խոստովանիմ եւ եր-  
կիրպագանեմ քեզ, անբաժանելի  
լոյս, միասնական Սուրբ Նրբոր-  
դութիւն եւ մի Աստուածութիւն .

արարիչ լուսոյ եւ հալածիչ խա-  
ւարի, հալածեա՛ ի հոգւոյ իմի՛նէ  
զխաւար մեղաց եւ անդիտութեան .  
եւ լուսաւորեա՛ զմիտս իմ ի ժա-  
մուս յայսմիկ աղօթել քեզ ի հա-  
ճոյս, եւ ընդունել ի քէն ըզիւրն-  
զըրուածս իմ . եւ ողորմեա՛ . . . :

Հայր երկնաւոր, Աստուած ճշ-  
մարիտ, որ առաքեցեր զՈրդիդ քո  
սիրելի ի խնդիր Մոլորեալ Ոչխա-  
րին, մեղայ յերկիրս եւ առաջի  
քո . ընկա՛լ զիս որպէս զԱնառակ  
Որդին, եւ զգեցո՛ ինձ զսպասմու-  
ճանն զառաջին՝ զոր մերկացայ  
մեղօք . եւ ողորմեա՛ . . . :

Որդի՛ Աստուծոյ, Աստուած ճշ-  
մարիտ, որ խոնարհեցար ի հայրա-  
կան ծոցոյ, եւ առեր մարմին ի  
Սրբոյ Կուռէն Մարիամայ վասն  
մերոյ փրկութեան . խաչեցար թա-  
ղեցար եւ յարեար ի մեռելոց եւ  
համբարձար փառօք առ Հայր,  
մեղայ յերկիրս եւ առաջի քո .  
յիշեա՛ զիս որպէս զԱւաղակն՝

յորժամ դաս արքայութեամբ քով .  
եւ ողորմեա' . . . :

Հոգի' Աստուծոյ , Աստուա'ժ ճըշ-  
մարիտ , որ իջեր ի Յորդանան եւ  
ի Վերնաստունն , եւ լուսաւորեցեր  
զիս մկրտութեամբ սուրբ աւազա-  
նին . մեղայ յերկինս եւ առաջի  
քո , մաքրեա' զիս վերստին աստը-  
ւածային հրով քով' որպէս հըրե-  
ղէն լիզուօք սուրբ զԱռաքեալսն .  
եւ ողորմեա' . . . :

Անեղ բնութիւն , մեղայ քեզ  
մտօք խմովք . հոգւով եւ մարմնով  
խմով . մի' յիջեր զմեզս իմ զառա-  
ջինս՝ վասն անուանդ քում սրբոյ .  
եւ ողորմեա' . . . :

Տեսո'ղ ամենայնի , մեղայ քեզ  
խորհրդով բանիւ եւ գործով .  
ջնջեա' զձեռագիր յանցանաց իմոյ ,  
եւ զրեա' զանուն իմ ի դպրութեան  
կենաց . եւ ողորմեա' . . . :

Քննո'ղ գաղտնեաց , մեղայ քեզ  
կամաւ եւ ակամայ , զխառնութեամբ  
եւ անգիտութեամբ , թողութիւն

շնորհեա՛ մեղաւորիւ , զի ի ծննդենէ  
սուրբ աւագանին մինչեւ ցայսօր  
մեղուցեալ եմ առաջի աստուա-  
ծութեանդ քո զգայտրանօք իմովք  
եւ ամենայն անգամօք մարմնոյս .  
եւ ողորմեա՛ . . . :

Ամենախնա՛մ Տէր , զի՛ր պահա-  
պան աչաց իմոց զերկիւղ քո սուրբ՝  
ոչ եւս հայել յայրատ , եւ ական-  
ջաց իմոց՝ ոչ ախորժել լսել զքանս  
չարութեան , եւ բերանոյ իմոյ՝ ոչ  
խօսել զսաութիւն , եւ սրտի իմոյ՝  
ոչ խորհել զչարութիւն , եւ ձեռաց  
իմոց՝ ոչ գործել զանիրաւութիւն ,  
եւ ոտից իմոց՝ ոչ գնալ ի ճանա-  
պարհս անօրէնութեան , այլ ուղ-  
ղեա՛ զչարժումն սոցա լինել միշտ  
ըստ պատուիրանաց քոց յամե-  
նայնի . եւ ողորմեա՛ . . . :

Հո՛ւր կենդանի Քրիստոս , զհուր  
սիրոյ քո զոր արկեր յերկիր , բոր-  
բոքեա՛ յանձն իմ , զի այրեսցէ  
զախտ հոգւոյ իմոյ , եւ սրբեսցէ  
զխիղճ մտաց իմոյ , եւ մաքրեսցէ

զմեղս մարմնոյ իմոյ, եւ վառեացէ  
զլոյս գիտութեան քո ի սրաի  
խում . եւ ողորմեա' . . . :

Իմաստութիւն հօր Յիսուս, աո՛ւր  
ինձ իմաստութիւն զբարիս խորհել  
եւ խօսել եւ գործել առաջի քո  
յամենայն ժամ . ի չար խորհրդոց  
ի բանից եւ ի գործոց փրկեա' զիս .  
եւ ողորմեա' . . . :

Կամեցող բարեաց, Տէ՛ր կամա-  
րար, մի՛ թողուր զիս ի կամս  
անձին իմոյ գնալ, այլ առաջ-  
նորդեա' ինձ լինել միշտ ըստ կա-  
մաց քոց բարեսիրաց . եւ ողորմեա' . . . :

Արքայ երկնաւոր, աո՛ւր ինձ  
զարքայութիւն քո զոր խոստա-  
ցար սիրելեաց քոց . եւ զօրացո՛  
ղսիրտ իմ ատել զմեղս, եւ սիրել  
զքեզ միայն, եւ առնել զկամս  
քո . եւ ողորմեա' . . . :

Խնամո՛ղ արարածոց, պահեա՛  
նշանաւ Խաչի քո զհոգի եւ զմար-  
մին իմ ի պատրանաց մեղաց, ի  
փորձութեանց զիւաց, եւ ի մար-

դոց անխրաւաց , եւ յամենայն  
վտանգից հոգւոյ եւ մարմնոյ .  
եւ ողորմեա' . . . :

Պահապան ամենայնի Քրի'ստոս ,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ,  
ի տուէ եւ ի գիշերի , ի նստել ի  
տան , ի գնալ ի ճանապարհ , ի  
ննջել եւ ի յառնել , զի մի' եր-  
բեք սասանեցայց . եւ ողոր . . . :

Աստուա'ծ իմ , որ բանաս զձեռն  
քո եւ ընուս զամենայն արարածս  
ողորմութեամբ քով , քեզ յանձն  
առնեմ զանձն իմ , դու հոգա' եւ  
պատրաստեա' զպէտս հոգւոյ եւ  
մարմնոյ իմոյ յայսմհետէ մինչեւ  
յաւիտեան . եւ ողորմեա' . . . :

Դարձուցի'չ մոլորելոց , զարձո'  
զիս ի չար սովորութեանց իմոց  
ի բարի սովորութիւն , եւ բե-  
ւեռեա' ի հոգի իմ զսոսկալի օր  
մահուն , եւ զերկիւղ պեհենոյն ,  
եւ զսէր արքայութեան , զի զըղ-  
ջացայց ի մեղաց , եւ գործեցից  
զարդարութիւն . եւ ողոր . . . :

Աղբիւր անմահութեան , աղբ-  
բացո՛ ի սրտէ իմմէ զարտասուս  
ապաշխարութեան՝ որպէս Պոռնը-  
կին . զի լուացից զմեզս անձին  
իմոյ յառաջ քան զեղանելն իմ  
յաշխարհէս . եւ ողորմեա՛ . . . :

Պարգեւի՛չ ողորմութեան, պար-  
գեւեա՛ ինձ ուղղափառ հաւատով  
եւ բարի գործով, եւ սուրբ մարմը-  
նոյ եւ արեան քո հաղորդութեամբ  
զալ առ քեզ . եւ ողորմեա՛ . . . :

Բարերա՛ր Տէր, Հրեշտակի բար-  
ւոյ յանձն արասցես զիս՝ քաղցը-  
րութեամբ աւանդել զհոգի իմ ,  
եւ անխռով անցուցանել ընդ չա-  
րութիւն այսոցն , որ են ի ներքոյ  
երկնից . եւ ողորմեա՛ . . . :

Հո՛յս ճշմարիտ Քրիստոս , ար-  
ժանաւորեա՛ զհոգի իմ ուրախու-  
թեամբ տեսանել զլոյս փառաց  
քոց ի կոչման աւուրն , եւ հանդ-  
չել յուսով բարեաց յօթեւանս ար-  
դարոց մինչեւ յօր մեծի գալըս-  
տեան քո . եւ ողորմեա՛ . . . :

Դատաւո՛ր արդար , յորժամ  
զաս փառօք Հօր՝ դատել զկեն-  
դանիս եւ զմեռեալս , մի՛ մտաներ  
ի դատաստան ընդ ծառայի քում ,  
այլ փրկեա՛ զիս ի յաւիտենական  
հրոյն , եւ լսելի՛ արա ինձ զերա-  
նաւէտ կոչումն արդարոց յերկնից  
արքայութիւնդ . ողորմեա՛ . . . :

Ամենողո՛րմ Տէր , ողորմեա՛  
ամենայն հաւատացելոց ի քեզ ,  
իմոց եւ օտարաց , ծանօթից եւ  
անծանօթից , կենդանեաց եւ մե-  
մեռելոց , շնորհեա՛ եւ թշնամեաց  
իմոց եւ ատելեաց զթողութիւն՝  
որ առ իս յանցանաց , եւ դարձո՛  
ղնոտա ի չարեացն , զոր ունին  
վասն իմ , զի ողորմութեան քում  
արժանի եղիցին . եւ ոյր . . . :

Փառաւորեա՛լ Տէր , ընկա՛լ զա-  
ղաչանս ծառայի քո , եւ կատար-  
եա՛ ի բարի զխնդրուածս իմ , բա-  
րեխօսութեամբ Սրբուհւոյ Աստու-  
ւածածնին եւ Յովհաննու Մկրտ-  
չին եւ Սրբոյն Գրիգորի մերոյ

Հոսաւորչին եւ Սրբոց Առաքե-  
լոց , Մարգարէից , Վարդապե-  
տաց , Ճգնաւորաց , Կուսանաց ,  
եւ ամենայն սրբոց քոց՝ երկնա-  
ւորաց եւ երկրաւորաց : Եւ քեզ  
փա՛ռք եւ երկրպագութիւն ան-  
բաժանելի Ս. Երրորդութեանդ  
յաւիտեանս յաւիտենից . Ամէն :



## Ա Ղ Օ Ք Բ

ՍՐԲՈՅՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ  
ՈՍԿԵԲԵՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

**Ո**ր օրհնես զայնոսիկ, որք  
օրհնեն զքեզ՝ Տէ՛ր՝ եւ սուրբ առ-  
նես զյուսացեալս ի քեզ . կեցո՛ւ  
զժողովուրդս քո եւ օրհնեա՛ւ  
զժառանգութիւնս քո . զլլումն  
եկեղեցւոյ քո պահեա՛ւ .

Սրբեա՛ւ զսոսա, որք ողջունե-  
ցին սիրով զվայելչութիւն տան քո .

Դո՛ւ զմեզ փառաւորեա՛ւ ասոր-  
ւածային զօրութեամբ քով եւ  
մի՛ թողուր զյուսացեալս ի քեզ .

Զխաղաղութիւն պարզեւեա՛ւ  
ամենայն աշխարհի, եկեղեցեաց,  
քահանայից, թագաւորաց ... եւ

զինուորեալ մանկանց նոցա եւ  
ամենայն ժողովրդեանն .

Ձի ամենայն տուրք բարիք եւ  
ամենայն պարգեւք կատարեալք՝  
ի վերուստ են իջեալք առ ի քէն,  
որ ես Հա՛յր Հուսոյ .

Եւ քեզ վայելէ փառք , իշխա-  
նութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ  
եւ յաւիտեանս յաւիտենից . Ամէն



## Ե Ր Պ

ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ՀԱՅՈՑ ԿԱՅՈՂԻԿՈՍԻ

Ասացեալ ի պաշտաման իւրոյ

**Յ**ԻՇԵՍՑՈՒՔ ի գիշերի զա-  
նուն քո, Տէ՛ր :

Բղխեսցեն սիրաք մեր զբան  
բարի, եւ լիզուք մեր պատմես-  
ցեն զգործ երկնաւոր թագաւո-  
րիդ :

Ի մէջ գիշերի յարուցեալ խոս-  
տովանեսցուք զքեզ, Տէ՛ր :

Զաղօթս մեր աապուք քեզ,  
Տէ՛ր, ի գաւիթս քո՝ ի մէջ նոր  
Երուսաղէմի :

Ի գիշերի համբարձցուք զձեռս  
մեր սրբութեամբ առ քեզ, Տէ՛ր :

Ի ձայն գոհութեան ամենայն  
հոգիք օրհնեցէ՛ք զՏէր :

Փ. Զարթի՛ք, փառք իմ, զարթի՛ք, եւ ես զարթեայց առաւօտուց. Աշէյուհա :

Զարթի՛ք ընդ զուարթունս, մանկունք վերինն Սիօնի. Աշէյուհա :

Զարթի՛ք, որդիք լուսոյ, ի յօրհնութիւն Հօրն Լուսոյ. Աշէյուհա :

Զարթի՛ք, փրկեալք արեամբ, եւ տո՛ւք զփառս փրկողին. Աշէյուհա :

Զարթի՛ք, նոր ժողովուրդք, նոր երգս առեալ նորոգողին. Աշէյուհա :

Զարթի՛ք, հարսունք հոգևով, սպասեալք գալոյ սուրբ փեսային. Աշէյուհա :

Զարթի՛ք, վառեալք լուսով՝ ըստ իմաստուն սուրբ կուսանացն. Աշէյուհա :

Զարթի՛ք, պատրաստեցէ՛ք իւղ ապտերաց զձերմ արտասուս. Աշէյուհա :

Զարթի՛ք եւ մի՛ ննջէք, նման  
յիմար կուսից նիրհէք . Աղէշուիս :

Զարթի՛ք երկիրպաղցուք եւ  
արտասուօք զայս ասասցուք . Աղե-  
շուիս :

Փ. Զարթի՛ր, ընդէ՞ր ննջես  
Տէ՛ր, մի՛ մերժեր զմեզ իսպառ :

Արի՛, Տէ՛ր, օգնեա՛ մեզ . տա-  
ցուք անուանդ քում զփառս :

Այժմ եւ յաւէտ Հօր եւ Որդւոյ  
եւ Սուրբ Հոգւոյն . Ամեն :

Փ. Զարթուցեալքս ի գրողմանէ  
գիշերային հանգստենէ :

Շնորհացէ մեզ մարդասէր Տէր  
մխիթարութիւն եւ ի սփոփանս  
եկեղեցւոյ :

Ահիւ եւ զողութեամբ կացցուք  
ի յաղօթս :

Եկեալ խոստովանեսցուք զյան-  
ցանս :

Եւ գտցուք ի Քրիստոսէ զքա-  
ւութիւն եւ զմեծ զսղորմութիւն :

43. Անբաժանելի եւ համագոյ  
Երրորդութեանդ , համաձայնեալք  
ընդ զօրս երկնից , փառս մատու-  
ցանեմք :

Փա՛ռք քեզ : Որ յանարուեստ  
յաթոռ բարձրացեալ հանդչիս .  
Սուրբ Աստուած , հզօր եւ ըսքան-  
չելագործ :

Փա՛ռք քեզ : Որ յանէից գոյա-  
ցուցեր զամենայն արարածս .  
Սուրբ Աստուած , անճառ Հօր՝  
անեղ Որդի :

Փա՛ռք քեզ : Որ անսչութեամբ  
խնամես զամենայն արարածս .  
Սուրբ Աստուած , բղխումն անըս-  
պառ աղբեր :

Տէ՛ր , ժողովրդապետք եկեղե-  
ցւոյ ի քէն հայցեն ասելով , հո-  
վիւ բարի , ողորմեա՛ բանաւոր  
հօտի :

Ամէն , Ալէլուիա , Ալէլուիա .

Ամէն , Ալէլուիա , Ալէլուիա :

ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ

ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

Անձին գոջացելոյ և բողոք իւրաքանչիւ բոյ  
 զիմի խոստովանաբար

**Ա**ՇԽԱՐՀ ամենայն ,

Առ իս նայեցեալ

Ախտակից լերս'ւք :

Բանամ ըղջըրթունս ,

Բարբառիմ լեզուաւս ,

Բողոքեմ զանձնէ .

Տե՛ր ողորմեա' . Տե՛ր ողորմեա' .

Տե՛ր ողորմեա' :

Գող եղէ մեղաց ,

Գլտող կորլոսեան ,

Գուք ինձ փորեցի :

Դաւեցի զանձն իմ ,  
 Դաւաճանցի ,  
 Դարան գործեցի . Տէր ող :

Երբեմն էի լոյս ,  
 Եւ այժմ՝ եմ խաւար  
 Եւ ստուեր մահու :  
 Զիա՛րդ պատմեցից ,  
 Զթիւ մեղաց իմոց ,  
 Զի բազում են յոյժ . Տէր ող :

Էրկինք եւ երկիր ,  
 Էկայք ողբացէք  
 Էղկելի զանձն իմ :  
 Ընտրեցի ըզչարն ,  
 Ընկալայ կամաւ  
 Ըզհոյլըս մեղաց . Տէր ող :

Թաթաւիմ աըղմով ,  
 Թաւալիմ ի մեղս ,  
 Թօթափիլ չկարեմ :  
 Ժանտ ախաիւ լըցեալ՝  
 Ժահահոտ եղէ  
 Ժամանակ բազում . Տէր ող :

Ի բաց մեկնեցայ  
 Ի սուրբ խորհրդոց ,  
 Ի բարեաց զործոց :  
 Էս'ւ վարկաւ անձն իմ  
 Լուսոյն հեռանալ ,  
 Լինել ընդ խաւար . Տէր ող :

Խորհուրդըք Հարին  
 Խաբեն ըղհօգիս ,  
 Խորասոյզ առնեն :  
 Ծածկեն անդընդօք ,  
 Ծիծաղին զլորմամբս ,  
 Ծանակ զիս առնեն . Տէր ող :

Կամաւ կորացայ ,  
 Կարկամեալս անձամբ ,  
 Կանգնիլ ո՛չ կարեմ .  
 Հուր մեղաց կիզող՝  
 Հրդեհեաց որ յիս ,  
 Հոգեւոր բարիս . Տէր ող :

Չաղկեցայ մեղօք ,  
 Չաղկեցին տեսողք ,  
 Չանձրացաւ հոգիս :

Ղեզլի դառնութեան  
 Հօղեալ ի սիրտ իմ,  
 Համար իմ շիջաւ. Տէր ող:

Ճաշակմամբ մեղաց  
 Ճաշեցի զմահ,  
 Ճօխս անքատացայ:  
 Մեռեալ եմ հոգւով,  
 Մոլորեալ՝ մտօք,  
 Միայն կամ մարմնովս. Տէր ո:

Յորոգայթ մահու  
 Յորսողին անկայ,  
 Յաղթեցայ յախտից:  
 Նեոխ թըշնամւոյն  
 Նըշաւակ եղէ,  
 Նոր միշտ խոցոտիմ. Տէր ող:

Շուրջ պատեալ զինիւ  
 Շունք բազումք եղեն,  
 Շաղախին արեամբս:  
 Որս եղէ չարին,  
 Ուռկանաւ մեղաց,  
 Որսացաւ զանձն իմ. Տէր ող:

Զարաշար վըշաօք  
 Զարչարի անձն իմ,  
 Զունիմ դադարումն :  
 Պարտապան զբտայ  
 Պարտուց յանցանաց  
 Պարտեալս ի մեղաց. Տէր ող:

Զանամ զըղջանալ ,  
 Զեռանիմ դարձեալ ,  
 Զեռնում հրով մեղաց :  
 Ռարբի կոչեցայ ,  
 Ռակայ անուանիմ  
 Ռամկական վարուքս . Տէր:

Սիրով ցանկութեամբ ,  
 Սաստիկ բարկութեամբ ,  
 Սիրտ իմ խոցեալ է :  
 Վիրօք յանցանաց  
 Վըշտանայ հոգիս  
 Վարանեալ շրջիմ . Տէր ող:

Տիրեցին ինչ չարք ,  
 Տարագիր հանին  
 Տիրական զըրկացն :

Բարունուոյն բարւոյ  
 Բախճական ձայնին  
 Բոաինս ո՛չ լըւայ . Տէր ող:

Յանկութիւն չարեաց  
 Յանկալի դիմօք ,  
 Յաւեցոյց զաչս իմ :  
 Իւրաքանչիւրոց  
 Իւսմամբ խուռն ախաից  
 Իւծեալ է հողիս . Տէր ող :

Փութացի՛ր անձն իմ  
 Փախչել ի չարեաց ,  
 Փափաքել բարեաց :  
 Բեզ միշտ մե՛րձ ծանիր  
 Քուն մահու եկեալ ,  
 Քննող դատաւոր .  
 Տէր ողորմեա՛ . Տէր ողորմեա՛ .  
 Տէ՛ր ողորմեա՛ :

Աստուածածնին բարեխօսու-  
 թեամբն .

Յիշեա՛ Տէր , եւ ողորմեա՛ :

ՆՈՐԻՆ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ

ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԵՐԳ ԱՂՕԹԱԿԱՆ

Ի դէմս Սրբոյ Երրորդութեան

Նաև իւրաքանչիւրոյ դիմի Երրորդութեանն առանձնակի

**Ա**ՌԱԽՕ՛Տ լուսոյ ,  
 Արեգակն արդար ,  
 Առ իս լո՛յս ծագեա :  
 Բըղխո՛ւմն ի Հօրէ ,  
 Բըղխեա՛ ի հոգւոյս  
 Բան քեզ ի հաճոյս :  
 Գա՛նձդ ողորմութեան ,  
 Գանձիդ ծածկելոյ  
 Գըտող զի՛ս արա :

Դ՛նձն ողորմութեան ,  
 Դաւանողիս բա՛ց .  
 Դասեցո՛ւ վերնոց :  
 Երբեա՛կ միութիւն ,  
 Եղելոց խնամող ,  
 Եւ ինձ ողորմեա՛ :  
 Զարթի՛ր Տէ՛ր յօգնել ,  
 Զարթո՛ւ ըզթմրեալս ,  
 Զուարթնոց նմանել :  
 Էդ Հայր անըսկիզբն ,  
 Էակից Որդի ,  
 Է միշտ Սուրբ Հոգի :  
 Ընկա՛լ զիս , զըթա՛ծ ,  
 Ընկա՛լ ողորմած ,  
 Ընկա՛լ մա՛րդասէր :  
 Թագա՛ւոր փառաց ,  
 Թողութեանց տըւող ,  
 Թո՛ղ ինձ ըզյանցանս :  
 Ժողովող բարեաց ,  
 Ժողովեա՛ եւ զիս ,  
 Ժողովս անդրանկաց :  
 Ի քէն , Տէ՛ր , հայցեմ ,  
 Ի մարդասիրէդ ,  
 Ինձ բըժըշկութիւն :

Լե՛ր կեանք մեռելոյս ,  
 Լո՛յս՝ խաւարելոյս ,  
 Լուծանող՝ յաւոյս :  
 Խորհրդո՛ց գիտող ,  
 Խաւարիս շնորհեա՛ ,  
 Խորհուրդ լուսաւոր :  
 Ծընո՛ւնդ Հօր ծոցոյ ,  
 Ծածկելոյս ստուերաւ  
 Ծագեա՛ լոյս փառաց :  
 Կենարա՛ր Փրկիչ ,  
 Կեցո՛ ըզմեռեալս ,  
 Կանգնեա՛ ըզգլորեալս .  
 Հաստեա՛ հաւատով ,  
 Հաստատեա՛ յուսով ,  
 Հիմնեցո՛ սիրով :  
 Ձայնիւս աղաչեմ ,  
 Ձեռքս պաղատիմ ,  
 Ձիւ բարեաց շնորհեա՛ :  
 Ղամբարամբ լուսոյ ,  
 Ղեկավար ճարտար ,  
 Ղօղեալս ամբացո՛ :  
 Ծառագայթ փառաց ,  
 Ծանապարհ ինձ ցո՛յց  
 Ծեպել ի յերկինս :

Միածինըդ Հօր ,  
 Մո՛յժ զիս յառազաստ ,  
 Մաքուր հարսանեացդ :  
 Յորժամ գառ փառօք  
 Յահագին աւուրն ,  
 Յիշեա՛ զիս , Քրի՛ստոս :  
 Նորոգո՛ղ հնութեանց ,  
 Նորոգեա՛ եւ զիս ,  
 Նորոգ զարդարեա՛ :  
 Շնորհատո՛ւ բարեաց ,  
 Շնորհեա՛ զքաւութիւն ,  
 Շնորհեա՛ զթողութիւն :  
 Ուրախացո՛՛ Տէ՛ր ,  
 Ոգւոյս փրկութեամբ ,  
 Ոյր վասն եմ ի սուգ :  
 Զար մըշակողին ,  
 Զար սերմանց հորին ,  
 Զորացո՛ զպըստուղն :  
 Պարզեւի՛չ բարեաց ,  
 Պարզեւեա՛ իմոց ,  
 Պարանեաց թողութիւն :  
 Զուր շնորհեա՛ աչացո՛  
 Զերմ հեղուլ զարտօսր ,  
 Զընջել ըզյանցանս :

Ռեախնդ քաղցու ,  
 Ռամ հողույս արքո՛ ,  
 Ռահ ցոյց ինձ լուսոյ :  
 Սէր անուն Յիսո՛ւս ,  
 Սիրով քով ճըմկեա՛ ,  
 Սիրտ իմ քարեղէն :  
 Վասն գրթութեան ,  
 Վասն ողորմութեան ,  
 Վերբախն կեցո՛ :  
 Տենչալի տեսեամբ  
 Տո՛ւր ինձ յագենալ ,  
 Տէ՛ր Յիսուս Քրիստոս :  
 Բարո՛ւն երկնաւոր ,  
 Բոսեա՛ զաշակերտս  
 Բամից երկնայնոց :  
 Յօղ արեան քո Տէ՛ր ,  
 Յօղեա՛ ի հոգիս ,  
 Յընձասցէ անձն իմ :  
 Իլեծեալքս մեղօք ,  
 Իլեծեալ աղաչեմ ,  
 Իլեսել ինձ բարիս :  
 Փըրկի՛չ բոլորից ,  
 Փութա՛ զիս փըրկել  
 Փորձութեանց մեղաց :

Քաւի՛չ յանցանայ ,  
Քաւեա՛ զօրհնաբանս ,  
Քեզ երգել ըզփառս :


Աստուածածնին բարեխօսու-  
թեամբն .

Յիշեա՛ , Տէր , եւ ողորմեա՛ :





ԱՌՏՆԻՆ  
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ



ՍԱՀԻՖԷ Ի ԽԱԹԸՐԱԹ





















# Ֆ Ի Ն Ր Ի Ս Ք

Սահիֆե

Մուգասեւմէ . . . . . Թ

Օրհնութեան զիր Ա.մհն. Ս.  
Պատրիարք Հօր . . . . . ԺԴ

Թերնեմէսի . . . . . ԺԹ

Պիրիննի քաղ'ըն մուգասեւ-  
մէսի . . . . . 1-20

Մէլսէ . . . . . 21

## ԺԱՄԱԳԻՐԻՔ

Հանգանակ հաւատոյ . . . . . 23

Հայր մեր . . . . . 27

Զքէն զոհանամք . . . . . 29

Փառք ի բարձունս . . . . . 31

Տէր տու ընդեան . . . . . 42

|                                                                      |         |
|----------------------------------------------------------------------|---------|
| Ի զիշերի և ի տուընջեան . . . . .                                     | 49      |
| Տէր երկնի և երկրի . . . . .                                          | 56      |
| Դոհանամբ զքէն Տէր Աստուած մեր ,<br>որ զարթուցեր . . . . .            | 63      |
| Դոհանամբ զքէն Տէր Աստուած մեր ,<br>որ երեւելի լուսով քով . . . . .   | 72      |
| Յարեւելից մինչեւ ի մուտս . . . . .                                   | 78      |
| Տէր մեր և Փրկիչ Յիսուս Քրիստոս . . . . .                             | 86      |
| Օրհնեալ Տէր , որ բնակեալդ ես . . . . .                               | 88      |
| Լո՛ւր ձայնից մերոց . . . . .                                         | 89      |
| Հայր գթած . . . . .                                                  | 91      |
| Յոյս կենաց . . . . .                                                 | 92      |
| Պահպանեա զմեզ . . . . .                                              | 93      |
| Ի մերձենալ երեկոյիս . . . . .                                        | 93      |
| Տէր բարերար . . . . .                                                | 94      |
| Շնորհատու բարեաց . . . . .                                           | 96      |
| Աղօթք հանգստեան յառաջ , ե'անի պիւ-<br>ծիւն «Եկեսցէ» թագըմբ . . . . . | 149-191 |
| Օրհնեալ ես Տէր Աստուած մեր . . . . .                                 | 193     |
| Փառք քեզ Տէր , փառք քեզ . . . . .                                    | 194     |
| Զլիւծիւն սեղանոյս . . . . .                                          | 195     |
| Տէր ամենակալ . . . . .                                               | 228     |
| Տէր Աստուած փրկութեան մերոյ . . . . .                                | 238     |

## ՍԱՀՄԱՆ

|                                |    |
|--------------------------------|----|
| Բանից իմոց . . . . .           | 37 |
| Աստուած Աստուած իմ . . . . .   | 44 |
| Տէր հովուեսցէ զիս . . . . .    | 52 |
| Սիրեցի զի լուիցէ Տէր . . . . . | 59 |

|                                   |     |
|-----------------------------------|-----|
| Խոնարհեցո՞ Տէր . . . . .          | 66  |
| Տէր մի սրտմտութեամբ քով . . . . . | 71  |
| Բարի է խոստովան լինել . . . . .   | 80  |
| Ողորմեան ինձ Աստուած . . . . .    | 233 |
| Տէր, լուր ազօթից իմոց . . . . .   | 236 |

ՇԱՐԱԿԱՆ

|                                          |    |
|------------------------------------------|----|
| Աստուած բազումողորմ . . . . .            | 39 |
| Ի նեղութեան իմում . . . . .              | 40 |
| Վտանգիմ ի բազմութենէ մեղաց խոց . . . . . | 40 |
| Ծով կենցաղոյս . . . . .                  | 41 |
| Մերձ եմ յընկրդմիլ . . . . .              | 41 |
| Աղաչեմ զքեզ Տէր . . . . .                | 41 |
| Հայր բազումողորմ . . . . .               | 45 |
| Աղաչեմ զքեզ Հայր . . . . .               | 46 |
| Մեղաք մինչեւ յերկինս . . . . .           | 46 |
| Յոյս իմ ես դու Տէր . . . . .             | 47 |
| Վիրաւորեալ յանցանօք անձն իմ . . . . .    | 48 |
| Անկանիմ առաջի քո . . . . .               | 49 |
| Զղջման իմոյ զարտասուս . . . . .          | 53 |
| Դարձո՞ զցասումն քո ի մէնջ . . . . .      | 54 |
| Մեղայ Տէր բազումողորմ . . . . .          | 54 |
| Ողորմեան ինձ Աստուած իմ . . . . .        | 55 |
| Բազում են գթութիւնք . . . . .            | 55 |
| Մերձեալ է օր գալստեան քո Տէր . . . . .   | 56 |
| Զանապական զհոգեւոր զանձն . . . . .       | 60 |
| Քրիստոս Աստուած Աստուծոց . . . . .       | 61 |
| Համբառնամ առ քեզ Տէր զաչս իմ . . . . .   | 61 |
| Մեղայ քեզ Տէր . . . . .                  | 62 |

|                                                 |    |
|-------------------------------------------------|----|
| Որ զաղաղակ . . . . .                            | 62 |
| Անկանիւմ առաջի բո . . . . .                     | 63 |
| Ողորմեան ինձ Քրիստոս . . . . .                  | 68 |
| Քրիստոս Աստուած, յոյս ապաշխա<br>րողաց . . . . . | 69 |
| Զմեղս իմ խոստովանիւմ . . . . .                  | 70 |
| Այիք յանցանաց . . . . .                         | 70 |
| Տէր որ ի մէջ յերկնն . . . . .                   | 71 |
| Մեղայ բեզ Տէր . . . . .                         | 71 |
| Աստուած մարդասէր . . . . .                      | 75 |
| Յամենայն ժամ աղաչանք իմ մյս են . . . . .        | 76 |
| Զարհուրեալ դողացաւ . . . . .                    | 76 |
| Ամենակալ, քաւեմ . . . . .                       | 77 |
| Եկեսցէ Տէր . . . . .                            | 77 |
| Աներեւութից քննող . . . . .                     | 82 |
| Մեղք իմ բազում են յոյժ . . . . .                | 83 |
| Մեղայ բեզ Տէր . . . . .                         | 83 |
| Զերծո՞ղ զիս յորդայնէ . . . . .                  | 84 |
| Ողորմեան ինձ Աստուած . . . . .                  | 84 |
| Բազմութեամբ յանցանօք . . . . .                  | 85 |

## ՆԱՐԵԿ

|                                              |     |
|----------------------------------------------|-----|
| Աղաչեմ զանիփոփոխելի . . . . .                | 97  |
| Աստուած ե Տէր կեանք . . . . .                | 100 |
| Եւ արդ՝ առ երկրածին ոք . . . . .             | 10  |
| Եւ արդ զո՞ւ միայն Աստուած երկնաւոր . . . . . | 112 |
| Արդ աղաչեմ զինամակալդ . . . . .              | 116 |
| Աստուած յաւիտենական . . . . .                | 123 |
| Եւ արդ՝ անկեալ յերեսս . . . . .              | 126 |

|                                             |          |
|---------------------------------------------|----------|
| Ամենակալ Աստուած . . . . .                  | 133      |
| Ամենակալ բարերար . . . . .                  | 137      |
| Որ եւ տնդատին իսկ (Լուսնի Կապույտ . . . . . | 171, 173 |
| Որդի Աստուծոյ . . . . .                     | 177      |

### Ա.Գ.Ա.Թ.Ա.Ն.Գ.Ե.Ղ.ՈՍ

|                                           |     |
|-------------------------------------------|-----|
| Այլ Տէր , տո՛ւր ինձ զօրութիւն . . . . .   | 196 |
| Տէր ամենակալ , որ պսակես . . . . .        | 199 |
| Եւ արդ , Տէր բարերար . . . . .            | 201 |
| Տէր տէրանց , Աստուած Աստուծոց . . . . .   | 202 |
| Տէր Աստուած ամենակալ . . . . .            | 206 |
| Տէր զօրութեանց , դու ես Աստուած . . . . . | 209 |
| Տէր Աստուած , Աստուած ամենակալ . . . . .  | 211 |

### ՄՈՒԿԹԷԼԻՅՈՒՆ ՏՈՒՄԱԼԱՐ

#### Ոսկերեւան

|                              |     |
|------------------------------|-----|
| Որ օրհնես զայնոսիկ . . . . . | 192 |
|------------------------------|-----|

#### Ներսէս Լամբրոնացի

|                                           |     |
|-------------------------------------------|-----|
| Առ քեզ ակնարկեմ . . . . .                 | 219 |
| Ո՛վ Տէր և Դաստիարակ . . . . .             | 221 |
| Այլ շուրջ պատեալ ի տարակուսանաց . . . . . | 223 |

#### Վարդան Վարդապետ

|                           |     |
|---------------------------|-----|
| Անկիզբն Աստուած . . . . . | 225 |
|---------------------------|-----|

## Մուճասալ Տու'ա ի Բապպանի

Ամենասուրբ Հայր մեր և ստեղծող . . . 215

Հայրէ՛ծ զէ միւնաճաժը Ա.Է.Յի . . . 144

## ԲՆԱԳ.ԻՐ.Բ (Ասրլլար)

Հանգանակ հաւատոյ . . . . . 241

Օրհնութիւն զկնի «Տէր յերկնից»ին . . . . .

(Փառք ի բարձունս) . . . . . 244

Աղօթք Մանասէի . . . . . 247

Սաղմոս Ծ. — Ողորմեն ինձ Աստուած . . . . . 252

Ընկալ քաղցրութեամբ . . . . . 255

Որդի Աստուծոյ . . . . . 258

Աստուած և Տէր կեանք . . . . . 260

Հաւատով խոստովանիմ . . . . . 261

Որ օրհնես զայնոսիկ . . . . . 270

Յիշեսցուք ի գիշերի . . . . . 272

Աշխարհ ամենայն . . . . . 276

Առաւօտ լուսոյ . . . . . 282

## Առանին յիշատակարաններ

Սահիճէ ի խաբրար . . . . . 289

Ֆիհրիսք . . . . . 299



